

ՍԱՐԴՈՒ ԷԿՈԼՈԳԻԱ

*Բնության ամենահրաշալի ստեղծագործությունը
մարդն է: Մարդն ինքը բնությունն է: Միայն մարդու
միջոցով է բնությունը ճանաչում իրեն:*

Մ. Սարյան

*Բնությունը չի կարող հակառակվել մարդուն, եթե
մարդը չի հակառակվում նրա օրենքներին:*

Ա. Գեղցեմ

Բնության մեջ նկատվող հավասարակշռության խախտումը ստիպեց մարդուն գիտակցել, որ Երկրի վրա բնակվող բոլոր կենդանի օրգանիզմները միասին գոյություն ունեն ոչ թե ինքնուրույն, այլ կապված են շրջապատող միջավայրի հետ և կրում են դրա անմիջական ազդեցությունը: Այդ միջավայրում տեղի է ունենում կյանքի պրոցեսը, և նրան հարմարված կենդանի օրգանիզմները, այդ թվում նաև մարդը, հարատևում են իբրև մի ներդաշնակ անսամբլ:

Այն բանի գիտակցումը, որ մարդը բնության անբաժան մասնիկն է, ստեղծեց նոր գիտություն՝ «Մարդու էկոլոգիա», որի հիմնախնդիրները փոխկապակցված են ու փոխադարձ պայմանավորված ընդհանուր էկոլոգիայի հետ: «Մարդու էկոլոգիա» հասկացությունը կապված է մարդկային բնության՝ նրա մարմնի և հոգու կործանարար աղտոտվածության, մարդկության համատարած հետզարգացման՝ դեգրադացիայի հետ:

Ամբողջ մարդկության զարգացման ընթացքում աշխարհայացքային կարևորագույն հարցերից մեկը եղել է մարդու բնույթն ու գոյության իմաստը: Մ. Շելերը (1874-1928 թթ.) «Մարդու դիրքը տիեզերքում» աշխատության մեջ մարդկային կեցության կարգավիճակը բացահայտում է մարդուն օրգանական աշխարհի այլ ձևերի հետ համեմատելիս՝ ընդգծելով, որ մարդու և մնացած կենդանական աշխարհի միջև գոյություն ունեցող գլխավոր տարբերությունը պայմանավորված է մարդու հոգու առկայությամբ: Ըստ Մ. Շելերի՝ փիլիսոփայական անթրոպոլոգիան «*հիմնարար գիտություն է մարդու էության ու կառուցվածքի, բնության տարբեր ոլորտների նկատմամբ նրա վերաբերմունքի մասին, այդ էության առաջացման, նրա ֆիզիկական, հոգեբանական ու հոգեկան սկզբի, այն ուժերի մասին, որոնք գործի են դնում նրան և որոնք ինքն է գործի դնում...*»:

Դուալիստական ուսմունքներում հոգին ըմբռնվում է իբրև մարմնի հետ մեկտեղ ի սկզբանե գոյություն ունեցող մի բան (Դեկարտ, Սպենսեր և այլք)¹: Ծագելով կենդանի նյութի զարգացման որոշակի աստիճանում՝ հոգին դարձել է օրգանիզմի գոյությունը կարգավորող, կառավարող գործոն, կյանքի հետագա զարգացման պայման²: Մարդը հոգևոր էակ է: Այսինքն՝ նա ունի ոչ միայն ֆիզիկական մարմին, այլ նաև հոգի: Յետևաբար, մարդուն դիտարկել միայն մարմնական, կենսաբանական, ֆիզիոլոգիական տեսանկյունից՝ սխալ է: Խոսել մարդու էկոլոգիայի մասին, քննարկելով նրա միայն ֆիզիոլոգիական խնդիրները և չմտախոգվել նրա հոգու էկոլոգիայի մասին, նշանակում է չտեսնել էկոլոգիական հիմնախնդիրների խորքային պատճառները, քանի որ էկոլոգիական մեծաքանակ հարցերի լուծման գլխավոր բանալին գտնվում է հոգու էկոլոգիայի ոլորտում: Այն, ինչ մենք տեսնում ենք մեր շրջապատում և գրանցում որպես էկոլոգիական ճգնաժամ, առաջին հերթին մեր հոգու ճգնաժամի արտաքին դրսևորումն է: Ցանկացած էկոլոգիական աղետի պատ-

¹ Փիլիսոփայական բառարան, Երևան, Հայաստան, 1975, էջ 254:

² Նալչաջյան Ա. Հոգի (Հայկական սովետական հանրագիտարան), Երևան, հ. 6, 1980, էջ 506:

ճառը մեր հոգու էկոլոգիայի աղետալի վիճակն է: Չի կարելի բնության էկոլոգիայի և մարդու էկոլոգիայի հիմնախնդիրները դիտարկել և փորձել լուծել՝ չպարզաբանելով դրանց կախվածությունը մշակութային և հոգևոր ոլորտներից: Մշակույթը մարդու որոշիչ էությունն է, նրա «երկրորդ բնությունը», իսկ մշակույթի հիմքում ընկած է հոգևոր սկիզբը: Ակադեմիկոս Յ. Մ. Լոտմանը մշակույթը պատկերավոր անվանել է «մարդկային հոգու էկոլոգիա»: Անհատի, նրա մշակույթի և հոգևոր աստիճանով է պայմանավորված բնության նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքը: Հոգևոր սնանկացումը և մշակույթի ցածր մակարդակն են ստեղծում այն վտանգները, որոնք սպառնում են բնության, մարդկության ու մոլորակի գոյությանը: Դժբախտաբար, սա արդեն սոցիալական երևույթ է, ժամանակակից քաղաքակրթության զարգացման օրինաչափություն: 19-րդ դարում մարդու հոգևոր քայքայումը ուժեղացել է, և քանի որ «մշակույթ» և «հոգևոր» հասկացությունները փոխապայմանավորում են միմյանց, ապա հոգևոր վիճակի կորուստը մշակույթի կորուստ է: Եվ, հակառակը, մշակույթի կորուստը հոգևոր կորուստ է³:

«Էկոլոգիական խնդիրները, ըստ էության, կրում են մարդաբանական բնույթ, քանի որ մարդուց են ծնունդ առել և ոչ թե բնությունից: Ուստի և շրջակա միջավայրի ճգնաժամով պայմանավորված շատ հարցերի պատասխաններ պարունակվում են մարդկային հոգում և ոչ թե զուտ տնտեսության, կենսաբանության, տեխնոլոգիայի կամ քաղաքականության ոլորտներում: Բնությունը, իրապես, այլակերպվում կամ կործանվում է ոչ թե ինքն իրեն, այլ մարդու ազդեցության արդյունքում: Իսկ մարդու գործունեությունը նրա գիտակցության դրսևորումն է, և այսօր բնապահպան տեսաբանների, ինչպես նաև աստվածաբանների խնդիրն է նախ և առաջ մարդու գիտակցության մեջ «վերականգնել էկոլոգիական հավասարակշռությունը»՝ այն ժամանակը, երբ մարդն ապրում էր բնության հետ կատարյալ ներդաշնակության մեջ:

...Բազմաթիվ են փաստերը, որ մարդու հոգևոր վիճակը վճռող դեր է խաղում, քանի որ ազդում է շրջակա միջավայրի վրա ինչպես արտաքին ներգործության դեպքում, այնպես էլ այդ ներգործության բացակայության պայմաններում: Մարդաբանության և էկոլոգիայի փոխադարձ կապը առավելագույն պարզությամբ է բացահայտվում մեր օրերում, երբ աշխարհն ապրում է միաժամանակ երկու ճգնաժամ՝ հոգևոր և էկոլոգիական: Էկոլոգիական ճգնաժամի լիարժեք հաղթահարումը հոգևոր ճգնաժամի պայմաններում աներևակայելի է: Էկոլոգիական խնդիրների մարդածին հիմքը ցույց է տալիս, որ մենք շրջապատող աշխարհը փոխում ենք մեր ներաշխարհին համապատասխան ձևով, ուստի և բնության ձևափոխումը պիտի սկսվի հոգու այլակերպումից: Ըստ եկեղեցու երանելիներից մեկի՝ մարդը կարող է ամբողջ երկիրը դրախտի վերածել միայն այն ժամանակ, երբ նա դրախտը կրի իր իսկ ներսում»⁴:

Էկոլոգիայի խնդիրը բնության պահպանությունն է: Մարդու էկոլոգիայի խնդիրը նրան իր հոգևոր բնույթին վերադարձնելն է, բնության, Հայրենիքի (Տիեզերքի) հետ միավորելը, ինչպես նաև մարդու և բնության միջև ներդաշնակություն ստեղծելը: Էկոլոգիայի խնդիրները լուծելիս առաջին հերթին պետք է սկսել մարդու էկոլոգիայից՝ այս հարցում ներգրավելով տարբեր բնագավառների՝ փիլիսոփայության, գիտության, կրոնի, արվեստի, մշակույթի մասնագետների: Կասկած չկա, որ մարդու էկոլոգիան կապված է սոցիալական էկոլոգիայի, քաղաքային էկոլոգիայի (ուրբեէկոլոգիա), անթրոպոլոգիայի, պատմության, հնագիտության, փիլիսոփայության, բարոյագիտության (էթիկայի), հոգեբանության հետ:

Հին Հունաստանի փիլիսոփաները համարում էին, որ մարդը փոքր Տիեզերք է՝ Միկրոկոսմոս՝

³ Агаджанян Н. А., Горожанин Л. С. Вступая в XXI век: кризис культуры и интеллигенция. Иваново-Москва, 2005, стр. 38.

⁴ Գրիգորյան Կ., Եսայան Ա., Տեր Սինաս քահանա Սարտիրոսյան, Բնապահպանություն և աստվածաբանություն, Վաղարշապատ, 2007, էջ 170:

ընդունելով, որ այն իր բնույթով ստեղծված է մեծ Տիեզերքի՝ Մակրոկոսմոսի նմանությամբ: Տիեզերքը ընդգրկում է տարաբնույթ նյութական և էներգիական ոլորտներ: Դա վերաբերում է նաև մարդուն և նրան շրջապատող բնությանը: Տիեզերքի, մարդու, բնության էներգիական ոլորտները փոխկապակցված են և ազդում են մեկը մյուսի վրա: Նրանց միջև գործում է հակադարձ կապի սկզբունքը՝ ստեղծելով ինքնակարգավորվող համակարգ: Այդ համակարգի որևէ օղակում էներգիական խախտումը անմիջապես զգացվում է նրա բոլոր մակարդակներում: Արևելյան ասույթը սովորեցնում է. «Երկրի վրա թռչունի փետուրի վայր ընկնելը ամպրոպ է առաջացնում հեռավոր աշխարհներում»:

Տիեզերքը ենթարկված է որոշակի կարգուկանոնի: Այն բարեհաճ է մարդկանց նկատմամբ, բայց և անտարբեր չէ մեր գիտակցության մեջ ծագած մտքերի նկատմամբ:

Մարդկային միտքը հոգեկան (հոգևոր) էներգիայի տարատեսակ է, որի ճառագայթումը ձևավորում է Երկրի հզոր ոլորտներից մեկը՝ մտքի ոլորտը կամ նոոսֆերան: Այդ հզոր էներգիան կարող է լինել կործանարար կամ ստեղծարար: Այն կարող է խցանել տարածությունը կամ այն լցնել գեղեցկությամբ: Հոգևոր և բարձր մշակույթ կրող մարդիկ իրենց լուսավոր, հրաշալի մտքերով շրջապատ են ուղարկում դրական ազդանշաններ, որոնք մաքրում են այն և նպաստում են մարդ - բնություն հարաբերության ներդաշնակեցմանը: Մյուս կողմից, կործանարար են անմաքուր ու չար մտքերը, որոնցով հիմա խճողված է Երկիրը և նրան շրջապատող տարածությունը: Այդ մտքերը նոոսֆերայում միավորվելով առաջացնում են բացասական մտքերի հսկայական կուտակումներ բացասական էներգիայով (նեկրոսֆերա), որն ավերելու ունակություն ունի: Այդ բացասական էներգիան ելքեր է փնտրում և դրսևորվում է բազմաթիվ տարերային աղետներով՝ երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ և այլն: Ներկայումս մարդկությանը պատուհասած համաշխարհային աղետների քանակից և ուժից կարելի է պարզորոշ դատել ժամանակակից մարդու մտածողության որակի մասին: Այսպիսով. աշխարհի բարեկեցությունը կախված է այն բանից, թե ինչ վիճակում է մարդկության համընդհանուր գիտակցությունը: ճանաչելով մեր մտքերի ստեղծագործական, արարչագործական ուժը և յուրացնելով հոգևոր զարգացման համընդհանուր օրենքները՝ մարդկությունը կարող է լուծել աշխարհն առողջացնելու իր առջև կանգնած կարևորագույն խնդիրը: *«Բավական չէ դեռ սեփական խոկում և խորհրդածություններ ունենալ: Պետք է որ վերջինները լինեն մաքուր, վեհ, արդար: Քանզի մեր նկարագիրն այլ բան չէ, եթե ոչ գումարը մեր մտածումների: Անհատի և ազգի ճակատագիրը բնորոշվում և դարբնվում է այդ մտածումներով...: Հսկիր մտածումներիդ մաքրության և վսեմության վրա: Հաճախ «քաղ հան»ի ենթարկիր մտքերդ, գտիր: Ամեն մտածում, հենց որ տեղ գրավեց գլխիդ մեջ, պիտի ձգտի արտահայտվել», - հորդորում է Գարեգին Նժդեհը⁵:*

Միայն մարմնի և նրա ֆիզիոլոգիայի ուղղությամբ մարդու գիտակցության կողմնորոշումը սահմանում է կյանքի այնպիսի արժեքներ, որոնք հանգեցնում են միայն նյութական պահանջմունքների (հարստության, հեղինակության, պաշտոնի, բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքի, բնական հարստությունների սպառման) բավարարման և մարդուն զրկում են վեհ նպատակներից: Մարդիկ սկսում են պայքարել անցողիկ արժեքների համար, ինչը ծնում է բնության ու մարդկային էության դեգրադացիա: Որքան մեծ է նյութապաշտների թիվը, այնքան տվյալ ազգը ենթակա է վատասերումի, տկարացման ու քայքայման, իսկ *«Իրական հոգևոր արժեքը մեր օգոնային շերտն է, այդ պատճառով էլ մարդկանց բարոյական արժեքն անհրաժեշտ է չափել նրանց վարքագծով ու գործերով, այլ ոչ թե մասնագիտությամբ»,* - գրում է ակադեմիկոս Ն.Ա. Աղաջանյանը և ավելացնում, - *աշխարհը կառավարվում է մտքով: Հոգևոր ուժը ավելի հզոր է, քան ցանկացած նյութականը, իսկ բարոյական սխրանքն ավելի բարձր է, քան ֆիզիկականը: Հոգևոր առումով և բա-*

⁵ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր*, Երևան, «Հայաստան», 2001, էջ 66:

րոյապես սնանկ երկրում մարդիկ չեն կարող երջանիկ և նյութապես հարուստ լինել»⁶: Բացի դրանից, հոգևոր սնանկությունն առաջ է բերում նաև մարմնական հիվանդություններ: «Այնտեղ, ուր ազգն ընկնում է իր պատմական արժեքների բարձրությունից, հայտնվում է անկումի շրջանում, և նրա ոգին խանգարվում է բարոյական հիվանդությամբ»⁷:

Երկրագունդը ծանր հիվանդ է, ծանր հիվանդ է բնությունը, որովհետև ծանր հիվանդ է ժամանակակից մարդը: Դա մարդկային էության ճգնաժամի հետևանք է, որը տանում է դեպի բնության կործանում և մարդկության ոչնչացում: Ժամանակակից գիտությունը չի կասկածում ներկա քաղաքակրթությանը նախորդած այլ բարձր քաղաքակրթությունների (Լեոնորիա, Ատլանտիդա) գոյությանը, որոնք երկրի երեսից ջնջվել են ինչ-որ գլոբալ աղետներից: Մարդու էկոլոգիայի հիմնախնդիրները քննարկելիս պետք է մտածել այդ քաղաքակրթություններին կործանման հասցրած հավանական պատճառների մասին և զգուշացնել մարդկությանն այն պատասխանատվության մասին, որ նա կրում է Պատմության առջև մարդու և բնության ապագայի համար, որի ստեղծման և էվոլյուցիայի վրա ծախսվել են Տիեզերքի ու բնության ահռելի ուժեր:

Ակադեմիկոս Ն. Մոխսեևը այդ առիթով գրում է. «Ես կարծում եմ, որ մարդու՝ որպես կենսաբանական տեսակի, որպես կենսոլորտի բաղկացուցիչ մասի և նրա հետ առավել ակտիվորեն փոխներգործողի, զարգացումը շարունակվում է: Դեռ ավելին, այդ պրոցեսը (որի համար բնական է պահպանել անթրոպոգենեզ անվանումը՝ չնայած զուտ կենսաբանական էվոլյուցիայի դանդաղ ընթացքին) թևակոխում է նոր և շատ վտանգավոր փուլ»: Նրա մեկնաբանությունը պարզաբանում է մարդկության առաջ ծառայած գլոբալ հիմնախնդիրների շատ հարցեր և ներկայացնում է քաղաքական իրադարձությունների զարգացման հեռանկարի ևս մեկ տեսանկյուն: «Մոլորակը և հանրությունը թևակոխում են զարգացման նոր փուլ: Ակնհայտ է դառնում, որ շրջակա միջավայրի գերբեռնվածությունը վեր է ածվում ոչ միայն էվոլյուցիոն գործոնի, այլև այնքան արագ է աճում, որ խոսել բնության և մարդկության որևէ հավասարակշռության՝ հոմեոստազի պահպանման մասին այսօր դժվար է: Մարդը բնության իր խորշում (նիշա), այսինքն՝ կենսոլորտում, դարձել է բացարձակ մենաշնորհատեր: Իսկ ոչ մի կենդանի տեսակ այդ պարագայում չի կարող խուսափել էկոլոգիական ճգնաժամից: Այն կարող է ունենալ միայն երկու ելք՝ կամ տեսակ-մենաշնորհատերը կսկսի ենթարկվել դեգրադացիայի՝ աստիճանական անկման, կամ, պատշաճ ձևով վերափոխվելով (փոխելով բնության նկատմամբ իր վերաբերմունքի չափանիշները), կձևավորի իր համար նոր էկոլոգիական խորշ: ... Դեգրադացիան կանխելու համար սպասվում են էկոլոգիական նոր խորշի և նոոսֆերայի ժամանակաշրջանի անցման ուղիների տառապալից որոնումներ: Կոէվոլյուցիայի պայմանների իրացման խնդիրը, հետևաբար, նաև մարդկության՝ որպես կենսոլորտի տարրի դեգրադացիայի կանխումը, ըստ էության, հանգեցվում է նոր քաղաքակրթության ձևավորմանը»:

Փիլիսոփայության դոկտոր Լ. Բուևան գրում է. «Մարդու էկոլոգիայի հիմնախնդիրը ընդհանուր էկոլոգիայի ենթատեքստում և մշակութային ու հոգևոր-էկոլոգիական մոտեցումները բավական բարդ են ու քիչ են քննարկվում գիտական, կրթական ու մշակութային հասարակության կողմից: Բնության վրա ազդելու մարդկային հնարավորությունների անսահմանության մասին հին կարծրատիպը անկասկած սպառել է իրեն: Նոր կոէվոլյուցիոն մոտեցումը դեռևս չի ձևավորվել, որի ժամանակ չափազանց կարևոր է իմանալ մարդկային ազդեցության չափն ու սահմանները, որը ենթադրում է ավելի խորը կանխագուշակում, մարդկային գործունեության հակասական արդյունքների հաշվարկում և բացասական արդյունքների հանդեպ «պաշտպանական» համակարգերի ստեղծում, ըստ որում, ոչ միայն մարդուց «դուրս», այլև մարդու «ներսում»: Այն

⁶ Агаджанян Н. А. *Штрихи о времени и о себе*. Москва, 1999, стр. 10:

⁷ Գարեգին Նժդեհ, *Յատրնտիր*, Երևան, «Յայաստան», 2001, էջ 46:

բանից, թե մարդը կհասցնի՞ ստեղծել այդ «պաշտպանիչ» համակարգերը, հաշվի առնելով, որ ինքը վտանգավոր է դարձել իր համար, կախված է մարդու գոյատևումը և երկրի վրա կյանքի պահպանումը»:

Մեր շուրջը գործում են բնության բազմաթիվ օրենքներ ու օրի-նաչափություններ, որոնք բացահայտվել են մարդկության պատմության տարբեր ժամանակահատվածներում: Այդ օրենքները գործում են մեր կամքից անկախ և մեր առօրյա կյանքում դրանց կիրառումը պահանջում է որոշակի գիտելիքներ և անվտանգության որոշակի կանոնների պահպանում: Կյանքի հոգևոր ոլորտը ևս ունի իր օրենքներն ու օրինաչափությունները, որոնց բացահայտումն ու կիրառումը կապահովեր մարդու հոգևոր անվտանգությունը և կօգներ կյանքի շատ անցանկալի երևույթներից խուսափել: Սակայն շատերը չեն ընդունում կամ արհամարհում են այդ օրենքների գոյությունը, քանի որ դրանք բացահայտորեն չեն երևում, ճիշտ այնպես, ինչպես չի երևում էլեկտրական դաշտը, մագնիսական կամ ռադիոակտիվ ճառագայթումը: Բայց մարդիկ խստորեն կիրառում են էլեկտրական կամ ռադիոակտիվ դաշտերի օրենքներին վերաբերող կանոնները իրենց ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար: Սակայն ոչ ոք չի մտահոգվում իր հոգևոր անվտանգության մասին: Իսկ մարդիկ որտեղի՞ց կարող են տեղեկություն ստանալ, որտե՞ղ է գրված դրա մասին: Եթե այդ օրենքները անմիջական դրսևորումներ չունեն, ինչպե՞ս կարող են մարդիկ պահպանել իրենց հոգու հիգիենան:

Վստահորեն կարելի է ասել՝ Տիեզերքի Սահմանադրությունում՝ «Աստվածաշնչում»։ Աստվածաշնչյան **տասը պատվիրանները** կազմում են մարդու հոգևոր էկոլոգիայի հիմքը, իսկ քրիստոնեության ոսկե կանոնը՝ *«Ուրիշներին արա այն, ինչ կուզես, որ քեզ անեն»*, գտնվում է նաև մյուս համաշխարհային կրոնների հիմքում, քանի որ այն Տիեզերքի գլխավոր օրենքն է: Մարդկանց համար մի արա այն, ինչ չես ուզի, որ քեզ անեն: Ինչո՞ւ: Որովհետև Տիեզերքում գործում է բունբերանգի օրենքը՝ *«ինչ որ ցանես, այն կհնձես»*, *«փոս փորողը փոսն է ընկնում»*, *«լավություն արա, ջուրը գցիր »* և այլն: Ժողովրդական բանահյուսության մեծ մասը ասույթների ու ասացվածքների ձևով սերմնի-սերունդ փոխանցել է հոգևոր ոլորտի օրենքներին վերաբերող պատգամներ: Մեր նախնիները օգտվել են դրանցից՝ պահպանելով իրենց հոգևոր անվտանգությունը, ներդաշնակությունը բնության ու Տիեզերքի հետ, անաղարտ պահելով իրենց հոգու և մարմնի էկոլոգիան:

Մարդու էկոլոգիան այս տեսանկյունից քննարկելիս՝ առնչվում ենք մեզանում առկա այլ խնդրի՝ մարդու առողջության հարցերին: Առողջության խնդրում կարևորելով շրջական միջավայրի էկոլոգիայի, առողջ ապրելակերպի, սննդի, հիգիենայի դերը՝ չի կարելի անտեսել կամ նույնիսկ ստորադասել հոգու էկոլոգիայի դերը:

Ժամանակակից բժշկական բոլոր գիտություններն ուսումնասիրում են մարդու օրգանիզմը՝ նրա ֆիզիոլոգիական և հոգեբանական բոլոր կողմերով: Գիտատեխնիկական առաջընթացը բժշկագիտությունը համալրել է բարդ տեխնիկայով և մեթոդներով, որոնք հնարավորություն են տալիս կարճ ժամանակում ճշգրիտ ախտորոշել հիվանդությունները, միջամտել օրգանիզմում ընթացող բարդ կենսաքիմիական պրոցեսներին, կատարել անարյուն վիրահատություններ և այլն: Սակայն հիվանդությունները երկրի երեսից չեն վերանում: Դեռ ավելին, նոր հիվանդություններ են առաջանում, որոնց դեմ բժշկությունն անզոր է:

Բժշկությունը հնագույն գիտություն է: Պատմությանը հայտնի են խոշոր բժշկապետներ, այդ թվում և հայ, որոնք, ձեռքի տակ չունենալով ներկայիս բժշկության տեխնիկական և գիտական հնարավորությունները, կարողացել են ախտորոշել և բուժել հիվանդությունները: Ակամա հարց է ծագում: Ինչպե՞ս:

Հնում բժշկագիտությունը կազմում էր խորհրդապաշտությունների կարևոր մասը: Բժիշկները, բնականաբար, ստանում էին հոգևոր կրթություն, այդ պատճառով էլ համարվում էին ոչ միայն բժիշկներ, այլև իմաստուններ և իրենց գիտելիքները որպես խորհրդապաշտություն գաղտնի էին պահում: Անցյալի բժիշկները պատմության մեջ հայտնի են նաև որպես փիլիսոփաներ, բանաստեղծներ, բնագետներ, իսկ բժշկությունը դասվում էր արվեստների շարքին:

Հիվանդությունը դիտվում էր որպես Տիեզերական էթիկայի կանոնների խախտման հետևանք, իսկ այդ կանոնները, լինելով Տիեզերական, համամարդկային են և նույնն են բոլոր ժամանակների, բոլոր ազգերի ու տարբեր հավատքի մարդկանց համար: Հնում խիստ կարևորվել է բժշկի բարոյական նկարագիրը: *«Բժիշկ-փիլիսոփան Աստժո նման է»*, - ասում էր Հիպոկրատը՝ նկատի ունենալով բժշկի անբասիր վարքը:

Բժշկելու պրոցեսում կարևոր նշանակություն է տրվել հիվանդի հոգեբանական վիճակին: Մարդն իր մեջ կրելով հիվանդություն, կրում է նաև որոշակի հոգևոր որակ, ինչը չունի առողջ մարդը: Սենեկան գրում է, - *«Բուժվելու ցանկությունը մի քայլ է դեպի ապաքինում»*:

Հիպոկրատն ասում է. *«Պետք է բուժել ոչ թե հիվանդությունը, այլ հիվանդին»*, ընդունելով, որ մարդը ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր էակ է: *«Չի կարելի բուժել մարմինը՝ չբուժելով հոգին»*, - նշում է Սոկրատեսը:

Ներկայումս բժիշկների և գիտնականների մի մասը նույնպես մարդուն տեսնում է նրա հոգևոր և ֆիզիկական ներդաշնակ միասնության մեջ: Արդեն գաղտնիք չէ, որ մարդու ֆիզիկական մարմինը շրջապատված է մեզ համար անտեսանելի ինֆորմացիոն-էներգիական դաշտով (կենսադաշտով), որը կազմում է տիեզերական միասնական նմանատիպ դաշտի մի մասը, որտեղ գործում է հակադարձ կապի օրենքը՝ ստեղծելով ինքնակարգավորման անխափան համակարգ: Հենց դրանով է պայմանավորված այն, որ մարդու ցանկացած միտք կամ գործողություն, լավ թե վատ, այդ միասնական դաշտի շնորհիվ նորից վերադառնում է իրեն, փոփոխություններ առաջացնելով նրա սեփական դաշտում, որն էլ ազդելով մարդու ֆիզիկական կառույցների վրա, առաջացնում է հիվանդություններ: Ահա թե ինչու այդ դաշտի դեֆորմացիաների հետևանքով առաջացած հիվանդությունների բուժման ժամանակ առաջին պլան է մղվում հիվանդի հոգեբանական վիճակը՝ սեփական սխալների գիտակցումը և զղջումը, որը հնարավորություն է տալիս վերականգնելու մարդու և Տիեզերքի փոխհարաբերության ներդաշնակությունը: Դա է պատճառը, որ ավանդական բժշկության մեջ շատ են օգտագործվել աղոթքներ, կատարվել են զանազան կրոնական ծեսեր:

Ամիրդովլաթ Ամասիացու և Մխիթար Հերացու առաջարկած շատ դեղատոմսերի վերջում ավելացված է *«բժշկվում է Աստժով»*՝ նկատի ունենալով վերը նշված Մարդ – Բնություն, Մարդ – Աստված ներդաշնակության վերականգնումը:

Քանի որ ներկայումս մարդկանց մեծամասնության վարքագիծը չի ենթարկվում վերը նշված համամարդկային բարոյական նորմերին, էթիկայի և մշակույթի բարձրագույն մակարդակին, մեզանից յուրաքանչյուրի կենսադաշտում առկա են այդպիսի, այսպես կոչված, «ականներ», որոնք ավելի հաճախ են սկսել գործել: Դրանով կարելի է բացատրել վերջին ժամանակներում սիրտ-անոթային և ուռուցքային հիվանդությունների աճը: Ժամանակակից բժշկությունը դա փորձում է բացատրել միջավայրի աղտոտվածությամբ, սոցիալական կյանքի ստրեսներով, էկոլոգիապես անորակ սննդով:

Գիտության և տեխնիկայի առաջընթացը, նորագույն նվաճումների մասին տեղեկատվական

հսկայական դաշտը մեզ հնարավորություն են տալիս ընդարձակելու մեր պատկերացումները Տիեզերքի և նրանում կատարվող երևույթների մասին, խորամուխ լինելու նրանց նուրբ մեխանիզմների մեջ, որոնք ավելի ու ավելի են համոզում, որ մենք հանդիսանում ենք «մարդկություն» կոչվող միասնական օրգանիզմի բջիջները, որն իր հերթին մեկ ամբողջական համակարգի՝ Տիեզերքի մասնիկն է:

Երևի միայն այս ճշմարտության գիտակցումով և ժամանակակից բժշկության նվաճումներն ավանդական բժշկության հսկայական փորձի հետ համադրելով՝ կարելի է հաղթահարել մարդկային հասարակության շատ դժվարություններ, այդ թվում նաև՝ շատ հիվանդություններ:



Բովանդակություն